



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Հ Ր Ա Մ Ա Ն

«23» *Տարբ.* 2010թ.

№ 688-Վ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԻ ՇԱՐՔ ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2008թ. սեպտեմբերի 4-ի «ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1005-Ն որոշման 18 կետի 4-րդ ենթակետը և նպատակ ունենալով նվազեցնել ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի և հարկային (տարածքային) տեսչությունների միջև փաստաթղթաշրջանառությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.11.2010թ. թիվ 2429-Ա «Ազրեսիվ հարկային պլանավորման ռիսկեր պարունակող դեպքերի վերաբերյալ կենտրոնացված շտեմարանի ստեղծման կարգը հաստատելու մասին» հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները

1) հրամանի հրամանի 2-րդ կետը խմբագրել և շարադրել հետևյալ կերպ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ օպերատիվ-հետախուզության, ներքին դիտարկումների և վերահսկողության, իրավաբանական, քննչական, հետաքննության վարչությունների պետերին, հարկային (տարածքային) տեսչությունների պետերին՝

սույն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 2և 1-ին համապատասխան գույքագրել սույն կառուցվածքային ստորաբաժանման տրամադրության տակ գտնվող (հայտնի)՝ ազրեսիվ հարկային պլանավորման ռիսկեր պարունակող դեպքերի վերաբերյալ տեղեկությունները և էլեկտրոնային տարբերակով ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման և հարկման ընթացակարգերի վարչություն:

2) հրամանի 3-րդ կետը խմբագրել և շարադրել հետևյալ կերպ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային տեսչությունների աշխատանքների համակարգման վարչությանը՝

սույն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի համաձայն ստացված տեղեկությունները, դրանք ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում համալրել վարչության տրամադրության տակ գտնվող (հայտնի)՝ ազրեսիվ հարկային պլանավորման ռիսկեր պարունակող դեպքերի վերաբերյալ տեղեկություններով և դրանց՝ կենտրոնացված շտեմարանում տեղադրման գործընթացն իրականացնել սույն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի համաձայն:

3) հրամանի հավելվածով հաստատված կարգի 4-րդ կետը խմբագրել և շարադրել հետևյալ բովանդակությամբ.

Հարկային մարմնի հսկողական գործառույթներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումները, հարկային (տարածքային) տեսչությունները, իրենց կողմից իրականացվող գործառույթների շրջանակներում՝ ազրեսիվ հարկային պլանավորման ռիսկեր պարունակող դեպքեր հայտնաբերելիս (անկախ ստուգումների, ռաումնասիրությունների արդյունքների), հայտնաբերման ամսվան հաջորդող ամսվա մինչև 10-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման և հարկման ընթացակարգերի

վարչությանը (այսուհետ ՀՎԱՀԸ վարչություն) ներկայացնում են տեղեկություն՝ սույն կարգի Ձև 1-ի (այսուհետ՝ Ձև 1) համաձայն: Ձև 1-ի 4-րդ սյունակում նկարագրվում է ագրեսիվ հարկային պլանավորման ռիսկեր պարունակող դեպքի նկարագրությունը (ապրանքների անվանացանկը, քանակն ու գինը կամ ծառայության տեսակը, ծավալն ու արժեքը), գործարքի մասնակից կողմերը, ինչպես նաև պարտադիր նշվում է գործարքի համապատասխանությունը սույն կարգի 3-րդ կետում սահմանված պայմաններից որևիցե մեկին (մի քանիսին),

4) հավելվածի 5-րդ կետը խմբագրել և շարադրել հետևյալ բովանդակությամբ.

ՀՎԱՀԸ վարչությունը սույն կարգի 4-րդ կետի համաձայն ստացված տեղեկատվությունը տրամադրում է ՀՀ ԿԱ ՊԵԿ Հարկային տեսչությունների աշխատանքների համակարգման վարչությունը (այսուհետ ՀՏԱՀ վարչություն), որը մեկ ամսվա ընթացքում հաշվառում ուսումնասիրում և ստուգում է դրանց համապատասխանությունը սույն կարգի 3-րդ կետով սահմանված պայմաններին: Վերջիններիս առկայության դեպքում, ագրեսիվ հարկային պլանավորման ռիսկեր պարունակող դեպքեր դիտարկելու նպատակով, դրանք ներկայացվում են ՀՀ ԿԱ ՊԵԿ համապատասխան գործառույթներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների համաձայնեցմանը:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 29.12.2010թ. թիվ 3020-Ա «ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից հսկողական գործառույթներ իրականացնելիս հաճախ հանդիպող սխալների տեղեկատուի ստեղծման և վարման աշխատանքների կանոնակարգման մասին» հրամանում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետը խմբագրել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման և հարկման ընթացակարգերի վարչությանը (այսուհետ ՀՎԱՀԸ վարչություն) ներկայացնել հաշվետու ամսվա ընթացքում ստուգումների այն ակտերով արձանագրված խախտումների վերաբերյալ տեղեկություններ (համաձայն թիվ 1 հավելվածի), որոնցով արձանագրված՝ պետական բյուջե վճարման ենթակա հարկի գումարը (առանց սուգանքների և տույժերի) կազմում է 2 մլն. դրամ և ավելի,

2) հրամանի 2-րդ կետի 2-րդ ենթակետը խմբագրել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի կողմից հսկողական գործառույթներ իրականացնելիս հաճախ հանդիպող սխալների տեղեկատուի հետագա թարմացումների նպատակով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՎԱՀԸ վարչությունը ստացված տեղեկատվությունը տրամադրում է ՀՀ ԿԱ ՊԵԿ Հարկային տեսչությունների աշխատանքների համակարգման վարչությանը (այսուհետ ՀՏԱՀ վարչություն),

3) հրամանի 5-րդ կետը խմբագրել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Տեղեկատուի թարմացումը կատարվում է յուրաքանչյուր ամիս՝ մինչև հաշվետու ամսին հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը:

3. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային (տարածքային) տեսչությունների պետերին՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.11.2010թ. թիվ 2429-Ա, 29.12.2010թ. թիվ 3020-Ա և 04.06.2009թ. թիվ 1349-Ա հրամաններով հաստատված կարգերով պահանջվող տեղեկատվությունը ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմին ներկայացնել միասնական փաթեթով՝ սահմանված ձևաչափերով:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գ. ԽԱՀԱՏՐՅԱՆ